հրդային Միութեան մէջ մտնող այլ երկիրների մասին:

Եւ յետոյ, մենք չգիտենք, թէ ամբո՛ղջ Անդրկովկասում եւ Ռուսաստանում ո՛րչափ հայ կայ, որչափ՝ ռուս, վրացի, թաթար, թուրք եւայլն: Անտարակոյս մօտիկ կամ հեռաւոր ապագային այս հարցերն եւս կը պարզուին վերջնականապէս:

Մինչ այն՝ մենք գոհանալու ենք ուրեմն մի կողմից 1926-ի վիճակագրութեան ընձեռած, թէկուզ մասնակի, տուեալներով, միւս կողմից էլ աւելի առաջ խորհրդային — վարչական կարգով ու զանազան առիթներով հրատարակուած թուերով: Բաղդատութեան համար առնելու է նաեւ, ինչ խօսք, թէ՛ 1897-ի համառուսական վիճակագրութիւնը եւ թէ՛ այնուհետեւ կովկասեան փոխարքայութեան թուական տուեալները, մանաւանդ ինչ վերաբերում է պատերազմին անմիջապէս նախորդող տարեթուերին:

Ի՞նչ են ասում մեզ թուական այդ տեղեկութիւնները, նախ եւ առաջ Հայաստանի եւ հայ ժողովուրդի (Խորհրդ. Միութեան, որ նոյնն է՝ Ռուսաստանի սահմաններում) քանակա՛ն կարողութեան, ազգաբնակչակա՛ն իրականութեան մասին: Որչափ եւ լրիւ չեն նրանք, որչափ եւ յաճախ հակասական են, իրար ժխտող, այնուամենայնիւ միակ յենարաններն են այս խնդրում, որ ուզենք-չուզենք հաշուի պիտի առնենք որպէս ելակէտ մեր դատողութիւնների: Հարկ եղած դէպքում, ուր ակներեւ են անճշդութիւնները, հարկաւ մատնանշելու է անհրաժեշտ սրբագրութիւնը:

Այստեղ բնականաբար չպիտի վերյիշենք վիճակագրական մանրամասն տեղեկութիւններ, այլ միմիայն նրանց ամփոփումները եւ եզրակացութիւնները, որոնք արդէն, բաւա՛կ պիտի սեպուին քաղաքական դատողութիւնների համար:

Մեր օրաթերթերը, ինչպէս նաեւ «Դրօշակ»ը եւ «Հայրենիք» ամսագիրը հանգամանօրէն կանդ առին այդ խնդրի վրայ, երբ յայտնի դարձան խորհրդային վիճակագրութեան տուեալները — այնչա՞փ անմխիթարական մեզ համար: Հայաստանի ամբողջութեան եւ առանձին-առանձին գաւառների, ինչպէս նաեւ Անդրկովկասի վիճակագրութեան ու մանաւանդ, առաջինների աշխարհագրական-քաղաքական նշանակութեանը ի մօտոյ ծանօթանալ ցանկացողների ուշադրութիւնը պիտի հրաւիրէինք մասնաւորապէս ընկ. Ռուբէնի խիստ շահեկան եւ արժէքաւոր ուսումնասիրութիւնների վրայ, որոնք լոյս են տեսել «Դրօշակ»ի էջերում:

Ամփոսել պէտք է միայն, ի դէպ ասած, որ այդպիսի ներհուն, բովանդակալից ու մեր քաղաքական գրականութեան մէջ դրեթէ եզակի աշխատութիւնները մնում են պարբերականի ծալքերում դրեթէ փակուած ու արտատրպուելով չեն հարստացնում մեր ա՞յնչափ աղքատիկ քաղաքական գրականութիւնը: Մի բան, որ առանց մեծամեծ գոհողութիւնների կարող էին անել թէ՛ «Դրօշակ» եւ թէ՛, մանաւանդ, «Հայրենիք»: Անցնինք:

Նախ եւ առաջ վեր առնենք վերջին՝ 1926 թ. դեկտեմբերի համամիութենական վիճակագրութեան արդիւնքները: Համաձայն դրանց, ինչպէս որ արդէն ժամանակին մեր թերթերի մանրամասն տեղեկութիւններից եւ քննական վերլուծումներից վերահասու եղաւ ընթերցողը, արդի Հայաստանը հաշուում է 867,671 հոգի բնակչութիւն:

Թէեւ պաշտօնական վիճակագրութեան պաշտօնական մեկնիչները ի տես այս (իրենց համար եւս անսպասելի սահմռկեցուցիչ) թուերի ջանքեր չխնայեցին սառն իրականութեանը խօսքով ու գրչով դէթ փոքր ինչ ջերմութիւն հաղորդելու, բայց փաստը մնաց փաստ, իրականութիւնն էլ իրականութիւն: Եթէ մինչեւ իսկ մի բոպէ ընդունելու լինինք — բանաւոր հիմեր չկա՛ն դրա համար,— թէ այս կամ այն պատճառով որոշ սրբագրութի՛ւն մտցնել պէտք է վիճակագրութեան արդիւնքների մէջ, ինչ Հայաստանին է վերաբերում, թէ՝ իրականին մէջ 50-60 հազարով աւելի՛ է Հայաստանի բնակչութիւնը քան որ ցոյց է տրուած, այնո՛ւամենայնիւ իրականութիւնը — Հայաստանի՛ իրականութիւնը — շատ էլ չի փոխուիր դրանով: Մնաց որ, ինչպէս ասացինք, հիմնաւոր չէ պաշտօնական լաւատեսութիւնը: Բոլոր պարագաներում՝ տակաւին յայտնի չէ, ինչպէս ասուեց վերը, թէ ըստ ազգութեա՛նց ինչ պատ-